

## **Ֆինանսական օգնության պարզեցված քաղաքականություն**

[Ֆինանսական օգնության պարզեցված քաղաքականության հղում](#)

«Հաքենսաք մերիդիան հելթ»-ում (Hackensack Meridian Health) մենք հանձնառու ենք բոլոր բուժառուներին անհրաժեշտ բժշկական օգնությամբ ապահովել՝ անկախ իրենց վճարման կարողությունից: Մենք երկարամյա քաղաքականություն ենք վարում՝ ըստ որի ֆինանսական օգնություն ենք տրամադրում մեր հիվանդանոցներում ծառայություններ ստացող և ֆինանսական դժվարություններ ունեցող անձանց: Այս հանձնառությունն արտացոլում է մեր առանցքային արժեքները՝ կարեկցանքը, արդարությունը և ներառականությունը, և վերաբերում է բոլոր բուժառուներին՝ անկախ տարիքից, սեռից, ռասայից, ազգային կամ կրոնական պատկանելությունից, սոցիալ-տնտեսական կարգավիճակից կամ սեռական կողմնորոշումից:

ՀԱՀ հիվանդանոցների կորպորացիայի («Հիվանդանոցներ») Ֆինանսական օգնության քաղաքականությունը (բարեգործական բուժօգնություն/Medicaid (այսուհետ միասին՝ «ՖՕԲ»)) կոչված է իրավասու բուժառուներին մասնակի կամ ամբողջությամբ զեղչված անհետաձգելի կամ այլ անհրաժեշտ առողջապահական ծառայություններ մատուցել ՀԱՀ հիվանդանոցների կորպորացիայի կողմից: Ֆինանսական օգնություն ակնկալող բուժառուները պետք է դիմեն ծրագրին, որի ամփոփ նկարագիրը տրված է ստորև:

### **Համապատասխան ծառայություններ**

Հիվանդանոցների կողմից տրամադրվող անհետաձգելի կամ այլ անհրաժեշտ առողջապահական ծառայություններ, որոնց համար վճարվել է հիվանդանոցներին: ՖՕԲ-ը կիրառվում է միայն հիվանդանոցներին վճարված ծառայությունների համար: Այլ ծառայությունները, որոնց համար առանձին վճարվել է այլ մատակարարների, ինչպիսիք են բժիշկները կամ լաբորատորիաները, չեն համապատասխանում ՖՕԲ-ին:

### **Պահանջներին համապատասխան բուժառուներ**

Համապատասխան ծառայություններ ստացող բուժառուներ, որոնք ներկայացնում են Ֆինանսական օգնություն ստանալու ամբողջական դիմում (ներառելով առնչվող փաստաթղթերը/տեղեկությունները), և որոնք, ըստ Հիվանդանոցների, համապատասխանում են Ֆինանսական օգնություն ստանալու պահանջներին:

## Համապատասխանության չափանիշներ

Income as a Percentage of HHS Poverty Income Guidelines (Income Sliding Scale)	Բուժառուի ծախսերի բաժինը որպես պետական Medicaid-ի տոկոս
փոքր կամ հավասար 200%	0%
ավելի քան 200%, սակայն պակաս կամ հավասար 225%	20%
ավելի քան 225%, սակայն պակաս կամ հավասար 250%	40%
ավելի քան 250%, սակայն պակաս կամ հավասար 275%	60%
ավելի քան 275%, սակայն պակաս կամ հավասար 300%	80%
ավելի քան 300%	100%

Կայքէջ. անհատը կարող է ֆինանսական օգնության մասին տեղեկությունները տեսնել առցանց՝ հետևյալ կայքէջում. <https://www.hackensackmeridianhealth.org/en/Pay-Bill/Financial-Assistance>

## Ինչպես դիմել

ՖՕԶ և հարակից դիմումի ձևերը կարող եք ձեռք բերել այսպես՝

## Դիմում

Անհատը կարող է դիմել ֆինանսական օգնության՝ նախնական գնահատում լրացնելով՝ պարզելու, թե արդյոք իրավունք ունի ֆինանսական օգնություն ստանալ և/կամ լրացնելով/ստորագրելով դիմում: (Նշում. Ֆինանսական օգնության բաժինն առանձին է հիվանդանոցների համար, ուստի եթե ծառայությունները տրամադրվել են մի քանի վայրերում, մի քանի դիմումներ պետք է ներկայացնել:) Դիմումը անվճար կերպով հասանելի է հետևյալ եղանակներից ցանկացածով՝

## Փոստ, հեռախոս կամ անձամբ

Գրելով հետևյալ հասցեին կամ անձամբ այցելելով ֆինանսական օգնության բաժիններից մեկը (երկուշաբթիից ուրբաթ): Ժամերը տարբերվում են՝ կախված ստորև նշված հիվանդանոցների գտնվելու վայրերից կամ հեռախոսից:

## Bayshore Medical Center (Attn: Financial Assistance Department)

727 N. Beers Street

Holmdel, NJ 07733

732-902-7080

**Carrier Clinic Behavioral Health Facility - (Non-Charity Care Facility)**

(Attn: Patient Financial Services)

252 County Road 601

Belle Mead, NJ 08502

551-996-3990

**Hackensack Meridian Health - Long Term Acute Care Hospital (LTACH) (Non-Charity Care Facility)**

(Attn: Financial Assistance Department)

530 New Brunswick Avenue

Perth Amboy, NJ

732-902-7080

**Hackensack Meridian JFK Johnson Rehabilitation Institute**

(Attn: Financial Assistance Department)

80 James Street, 3rd Floor

Edison, NJ 08818

Բուժառուևերին ընդունում են նախապես պայմանավորվածության համաձայն

732-321-7534

**Hackensack Meridian Johnson Rehabilitation Institute at Ocean University Medical Center**

(Attn: Financial Assistance Department)

425 Jack Martin Boulevard

Brick, NJ 08724

732-902-7080

**Hackensack Meridian Johnson Rehabilitation Institute at Riverview Medical Center**

(Attn: Financial Assistance Department)

1 Riverview Plaza

Red Bank, NJ 07701

732-902-7080

**Hackensack University Medical Center**

100 First Street, Suite 300

Hackensack, NJ 07601

551-996-4343

**Jane H Booker Family Health Center**

1828 W Lake Avenue #202

Neptune, NJ, 07753

732-902-7080

**Jersey Shore University Medical Center**

1945 Route 33  
Neptune, NJ, 07753  
732-902-7080

**JFK University Medical Center** (Attn: Financial Assistance Department)

80 James Street, 3rd Floor  
Edison, NJ 08818  
Բուժառուներին ընդունում են նախապես պայմանավորվածության համաձայն  
732-321-7534

**Ocean University Medical Center** (Attn: Financial Assistance Department)

425 Jack Martin Boulevard  
Brick, NJ 08724  
732-902-7080

**Old Bridge Medical Center** (Attn: Financial Assistance Department)

One Hospital Plaza  
Old Bridge, NJ 08857  
732-902-7080

**Palisades Medical Center** (Attn: Financial Assistance Department)

7600 River Road  
North Bergen, NJ, 07047  
201-854-5092

**Raritan Bay Medical Center** (Attn: Financial Assistance Department)

530 New Brunswick Avenue  
Perth Amboy, NJ  
732-902-7080

**Riverview Medical Center** (Attn: Financial Assistance Department)

1 Riverview Plaza  
Red Bank, NJ 07701  
732-902-7080

**Southern Ocean Medical Center** (Attn: Financial Assistance Department)

1140 Route 72 W  
Manahawkin, NJ 08050  
732-902-7080

Բարեգործական բուժօգնության դիմումը կարելի է նաև տպել Հաքենսաք մերիդիան հեյթ-ի կայքից՝ սեղմելով <https://www.hackensackmeridianhealth.org/en/Pay-Bill/Financial-Assistance> հղման վրա:

## **Հասանելի լեզուներ**

Ֆինանսական օգնության քաղաքականությունը, դիմումը և պարզեցված հակիրճ բնութագիրը հասանելի են անգլերենի սահմանափակ իմացությամբ («LEP») բնակչության հիմնական լեզվով, որոնք հինգ տոկոսից (5%) կամ 1000 անձից պակաս են Հիվանդանոցների կողմից սպասարկվող հիմնական տարածքում:

## **Դիմումի գործընթացի ամփոփում**

Բուժառույժ գրավոր դիմում է լրացնում, որտեղ պահանջվում է նշել տան եկամուտը, ակտիվները, ընտանիքի անդամների թիվը

Բնակության վկայագիրը պահանջվում է ՆՁ վարորդական իրավունքի, կոմունալ ծառայությունների ստացականի կամ նմանատիպ այլ փաստաթղթի տեսքով:

Դիմումը գնահատվում է ամբողջականության և ճշգրտության տեսակետից:

Բուժառույժ պահանջվում է բացակայող տեղեկությունները

Դիմումի հաստատումը կամ մերժումն ուղարկվել է:

Լրացված դիմումները Ֆինանսական օգնության բաժին կարելի է ուղարկել վերոնշյալ հասցեներից մեկով:

Ֆինանսական օգնության պայմաններին համապատասխանության որոշում - Ընդհանուր առմամբ, անձինք իրավասու են սահող վճարի սանդղակի կիրառմամբ ֆինանսական օգնություն ստանալու, երբ իրենց ընտանիքի եկամուտը Դաշնային կառավարության Դաշնային աղքատության ուղեցույցների (ԴԱՈԼ) 600%-ն է կամ դրանից պակաս:

Ֆինանսական օգնության պայմաններին համապատասխանություն նշանակում է, որ այն ստացած անձանց բուժօգնության ծախսերը կմարվեն ամբողջությամբ կամ մասնակիորեն, և նրանցից չի գանձվի ավելին, քան ապահովագրված անձանցից՝ «Սովորաբար գանձվող գումարները» (ՍԳԳ) (ինչպես Ներքին եկամուտների ծառայությունը սահմանել IRC բաժնի 501(r)-ում): Միայն ընտանիքի եկամտի և ԴԱՈԼ-ի վրա հիմնված Ֆինանսական օգնության մակարդակներ որոշվում են, եթե եկամուտը կազմում է ԴԱՈԼ-ի մինչև 500%-ը:

Նշում - ԴԱՈԼ-ից բացի դիտարկվում են նաև այլ չափանիշներ (օրինակ՝ կանխիկ կամ կանխիկ վերածվող այլ ակտիվների առկայություն և տան ծախսերի համեմատ ամսական զուտ եկամուտների զգալի ավելցուկ), որոնք նախորդ կետում կարող են բացառություններ առաջացնել: Եթե ընտանիքի եկամուտը չլինի, կպահանջվի տեղեկատվություն այն մասին, թե ինչպես են բավարարում առօրյա կարիքները: Հիվանդանոցների Ֆինանսական օգնության բաժինն ուսումնասիրում է ներկայացված ամբողջական դիմումները և որոշում Ֆինանսական օգնության տրամադրմանը համապատասխանությունը՝ համաձայն Հիվանդանոցների Ֆինանսական օգնության քաղաքականության: Թերի դիմումները չեն դիտարկվում, բայց դիմողներին դա հաղորդվում է և հնարավորություն է տրվում տրամադրել բացակայող փաստաթղթերը/տեղեկությունները: (Նշում. Ֆինանսական օգնության բաժինն առանձին է հիվանդանոցների համար, ուստի եթե ծառայությունները տրամադրվել են մի քանի վայրերում, մի քանի դիմումներ պետք է ներկայացնել:)

Օգնություն կարելի է ստանալ հեռախոսով կամ այցելելով Ֆինանսական օգնության բաժին (երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան 8:00-ից երեկոյան 4:00-ը), որը գտնվում է վերը նշված հասցեում: